ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Սամվել Շավարշի Ասատրյանի «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Վերջին տասնամյակների ընթացքում աշխարհում նկատվում է տարատեսակ բնական աղետների հաճախականության մեծացում, ինչը հանգեցնում է սոցիալ-տնտեսական կյանքի խաթարմանը ոչ միայն առանձին երկրում, այլև նաև նրա հարակից տարածքներում: Ակնհայտորեն, աղետների հետևանքների հաղթահարումը ստեղծում է բազմաթիվ բարդ խնդիրներ, ինչի օրինակն է հանդիսանում Սպիտակի ավերիչ երկրաշարժը: Սեյսմիկ վտանգի և դրա հետևանքների վերացման նկատմամբ պատշաճ ուշադրության բացակայության պայմաններում Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց նյութական և ֆինանսական լուրջ դժվարությունների առջև, կապված փրկարարական աշխատանքների իրականացման, տուժած ընտանիքների օգնության, բնակարանային ֆոնդի և կարևոր ու առաջնահերթ ենթակառուցվածքների վերականգնման, շրջակա միջավայրի պաշտպանության և բազմաթիվ այլ ծախսերի հետ:

Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի կառավարումը պահանջում է համակարգված կանխարգելիչ և պաշտպանական միջոցառումներ, հատկապես շենքերի և շինությունների կառուցման ու պահպանման գործում, քանի որ հանրապետության տարածքը գտնվում է աշխարհի սեյսմիկ ակտիվ գոտիներից մեկում, որտեղ ժամանակ առ ժամանակ տեղի են ունեցել տարբեր ուժգնության

երկրաշարժեր: Բնական աղետների հետևանքների վերացման նկատմամբ մակերեսային մոտեցումը ստեղծեց նյութական կորուստների և ֆինանսական դժվարությունների հաղթահարման նոր խնդիրներ: Արդյունքում Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքները դեռևս շարունակվում են մինչ այսօր:

Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո անցած ժամանակահատվածում արտակարգ իրավիճակներին արձագանքելու հարցում Հայաստանում ձևավորվել է և բավականաչափ արդյունավետությամբ գործում է համապատասխան պետական կառույց: Սակայն բնական և տեխնածին աղետների հետ կապված ռիսկերի կառավարման և դրանց տնտեսական հետևանքների վերացման կամ մեղմման նպատակով անհրաժեշտ է մշակել համալիր ծրագիր՝ ուղղված բնակչության և պետության պաշտպանությանը: Այդպիսի ծրագրի կարևոր մասը պետք է դառնա սեյսմիկ ռիսկերից ապահովագրության համակարգի առկայությունը, որը մեծ արդյունավետությամբ է գործում տարբեր երկրներում:

Այսօր Հայաստանում արդեն իսկ որոշակիորեն ձևավորված են ապահովագրական շուկայի հիմքերը, սակայն դրա հնարավորությունները դեռևս օգտագործվում են մասնակիորեն, ինչը թույլ չի տալիս բարձրացնել երկրի տնտեսական անվտանգության մակարդակը: Գրախոսվող ուսումնասիրությունը հետապնդում է Հայաստանում ապահովագրական շուկայի զարգացման, դրա հնարավորությունները սեյսմիկ ռիսկերի կառավարման, ինչպես նաև բնական աղետների հետևանքների վերացման ասպարեզներում լիարժեք օգտագործման նպատակ: Այս հանգամանքով էլ պայմանավորված է հետազոտության հրատապությունն ու արդիականությունը:

Աշխատանքում ապահովագրությունը մի կողմից, դիտարկվում է որպես կառավարության տնտեսական քաղաքականության իրականացման, իսկ մյուս կողմից՝ պետության սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման կարևոր գործիք: Այդպիսի համակարգի առկայությունը կստեղծի լայն հնարավորություններ տնտեսական քաղաքականության արդիական ուղղությունների զարգացման և սոցիալական խնդիրների հետևողական լուծման

համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նշված համակարգը ենթադրում է նաև վերաապահովագրության գործընթաց, որի իրականացման դեպքում էականորեն մեծանում է հնարավոր կորուստների փոխհատուցումը և նվազեցվում պատճառված վնասը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետությունում բնական աղետներից ապահովագրության համակարգի ձևավորման խնդիրները և մշակել դրանց լուծման մոտեցումներ և առաջարկություններ: Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել սեյսմիկ ռիսկի էությունը, դրա դրսևորման ձևերը և ազդեցությունը տնտեսության վրա,
- բացահայտել սեյսմիկ ռիսկի կառավարման խնդիրները և գնահատել պետության դերը դրանց լուծման գործում,
- ուսումնասիրել բնական աղետների հետևանքների վերացման միջազգային փորձը և գնահատել ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունները,
- գնահատել ապահովագրության և վերաապահովագրության դերը բնական աղետների հետևանքների վերացման և սեյսմիկ ռիսկի նվազեցման գործում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական շուկայի վիճակը,
- գնահատել միջազգային ապահովագրության և վերաապահովագրության համակարգում ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների ներառման հնարավորությունները,
- վերլուծել Սպիտակի երկրաշարժի հետևանքով ՀՀ-ում վտանգված բնակարանային ֆոնդի վերականգնման դինամիկան,

- մշակել ՀՀ-ում բնական աղետների հետևանքների վերացման ռազմավարություն:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Բնական աղետների ապահովագրման համակարգերի ձևավորման տեսական և մեթոդական հիմունքները» հեղինակը բնութագրում է «բնական աղետ» և «տարերային աղետ» հասկացությունները, կախված դրանց ինտենսիվությունից և պատճառած վնասի չափից: Հեղինակը դրանցից լրջագույնը Հայաստանի համար համարում է սեյսմիկ ռիսկը, որի կառավարումը պահանջում է ապահովագրական համակարգի հայեցակարգային դրույթների ձևավորում, ինչպես նաև այդ ուղղությամբ օրենսդրահիրավական դաշտի կատարելագործում: Աշխատանքի այս գլխում հեղինակի կողմից իրականացված է ապահովագրության և վերաապահովագրության գործընթացների մեթոդաբանական հիմքերի համակողմանի ուսումնասիրություն:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Բնական աղետների ապահովագրման և վերաապահովագրման խնդիրները» նվիրված է բնական աղետների ռիսկերի ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրությանը և Հայաստանի Հանրապետությունում դրա տեղայնացման հնարավորությունների բացահայտմանը: Գնահատված է պետության դերը բնական աղետների հետևանքների վերացման գործում և բացահայտված է ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները: Գլխում հիմնավորվել է բնական աղետներից պետական, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքի պաշտպանության նպատակով անհրաժեշտ իրավական դաշտի ձևավորման անհրաժեշտությունը:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» ներկայացված է Սպիտակի երկրաշարժի հետևանքով հանրապետությանը պատճառված ընդհանուր վնասի գնահատականը, վերլուծված է աղետի գոտում բնակարանային ֆոնդի վերականգնման դինամիկան: Բացահայտված են երկրաշարժից ապահովագրման համակարգի ձևավորման խոչընդոտները, առաջարկված են բնական աղետների հետ կապված ռիսկերի կառավարման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիներ:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

1. Հիմք ընդունելով Հայաստանի և հարակից տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության վերլուծությունը, գնահատվեց սեյսմիկ ռիսկը և առաջարկվեցին դրա կառավարման մեխանիզմները:
2. Որոշվել է պետության համակարգող դերը բնական աղետների հետևանքների վերացման գործում, առաջարկվել են դրա առաջնային գործառույթները՝ կենտրոնացնելով հիմնական ջանքերը սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ, մասնավորապես բնակարանային ֆոնդի վերականգնմանը:
3. Առաջարկվել են բնական աղետների ապահովագրման և վերաապահովագրման համակարգի ձևավորման մոտեցումները ՀՀ-ում՝ հիմք ընդունելով նման համակարգերի ձևավորման միջազգային փորձը և հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները:
4. Մշակվել են Հայաստանի Հանրապետությունում բնական աղետների հետևանքների վերացման հայեցակարգային մոտեցումները՝ հիմք ընդունելով

մարզերում Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով պատճառված վնասի արդյունքների համակողմանի վերլուծությունը:

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունն ունի գործնական կարևոր նշանակություն, որի արդյունքները և առաջարկված մոտեցումները կարող են օգտագործվել պետական համապատասխան կառույցների կողմից հանրապետությունում բնական աղետների, մասնավորապես, երկրաշարժերի հետևանքների մեղմման և նվազեցման աշխատանքների իրականացման գործում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում ՀՀ-ում իրականացված տնտեսական քաղաքականության խոցելի կողմերից մեկն է եղել ապահովագրական համակարգի ստեղծման հետ կապված դժվարությունները: Ակնհայտ է, որ դրանք հիմնականում կապված են եղել անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայության և բնակչության ցածր եկամուտների հետ: Այդ իսկ պատճառով, այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են հանրապետության առողջապահությունն ու գյուղատնտեսությունը միչև օրս դեռևս ձևավորված չեն ապահովագրության արդյունավետ համակարգեր: Նման իրավիճակում բնական աղետներից ապահովագրության և վերաապահովագրության համակարգերի ձևավորումը հանրապետությունում կարող է առնչվել տարբեր խնդիրների, որոնց լուծման առումով աշխատանքում չկան համապատասխան մոտեցումներ:
2. Բնական աղետներից ապահովագրության և վերաապահովագրության համակարգերի ձևավորման միջազգային փորձից հայտնի է, որ

համապատասխան երկրների և կառույցների կողմից նման իրավիճակներում, որպես կանոն, ցուցաբերվում է մեծ ծավալի նյութական և ֆինանսական աջակցություն: Այդ առումով, աշխատանքում չկան համապատասխան գնահատականներ և նկարագրված չեն աջակցության որոշակի ուղղություններ, որոնք կվերաբերվեին ՀՀ-ին: Մեր կարծիքով, աշխատանքը կշահեր այդպիսի գնահատականների արկայության պարագայում:

3. Տարերային աղետների հետևանքների վերացման կամ մեղմման նպատակով աշխատանքում օգտագործված է միջազգային ասպարեզում տարբեր հեղինակավոր կազմակերպությունների կողմից կիրառվող մաթեմատիկական մոդելը: Դրականորեն գնահատելով հեղինակի այդպիսի մոտեցումը, միևնույն ժամանակ, կարծում ենք, որ դրանում կատարված փոփոխությունները հաշվի չեն առնում հանրապետությանը բնորոշ բոլոր հիմնական առանձնահատկությունները:

4. Գրախոսվող ուսումնասիրությունում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Սպիտակի երկրաշարժի հետևանքով հանրապետության հյուսիսային տարածաշրջանի բնակարանային ֆոնդին հասցրած վնասի, ինչպես նաև դրա փոխհատուցման նկարագրության վրա: Կարևորելով այս հանգամանքը, միևնույն ժամանակ նպատակահարմար կլիներ նաև գնահատել տվյալ տարածաշրջանում արդյունաբերական և գյուղատնտեսական ֆոնդերին հասցված վնասը:

Եզրակացություն

Նշված դիտողությունները կրում են մասնակի բնույթ և էապես չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա: Սամվել Շավարշի Ասատրյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար որոշակի կարևորություն ունեցող խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Սամվել Շավարշի Ասատրյանի «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.
տնտեսագիտության ինստիտուտի գիտ. քարտուղար,
տ..գ.թ., դոցենտ Ք.ՅՈՒ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
30.12.2019թ.